ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՓՈՔՐԻԿ ՊԻՈՆԵՐԻ ՑԵՎ ՓՈՂ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

891.99 մ
Պ-79

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1939

23.07.2013 12252 891.9915 Դ-79 ստ 30 MAY 2011

Սառնամանիք ու ցուրտ ձմեռ...
Թիթեռների պես ոդում
Ուրախ ճախրող ձյան փաթիլներ
Հանդարտ ներքև են թափվում։

Ռելսի կողքով, գառիվայրով,
Իրենց գյուղից ուրիշ գյուղ,
Մի պիոներ ձյունի միջով
Լուռ անցնում եր անբերկյուղ։

Հիվանդ մորը տանը թողած,
Նա բժշկի յեր գնում,
Խոպոպները քամուն տված,
Արագ առաջ եր անցնում։

2831
39



Իսկ ռելսերով հեռուներից,
Հովիտներով, անտառով,
Ճեպընթացը մեծ քաղաքից
Մոտենում էր սուլելով...

Զյունոտ ճամբին մեկ էլ հանկարծ
Կանգնեց փոքրիկ պիոներ.
Յերկաթ գիծը տեսավ քանդված,—
Ծռված փայլուն զույգ ռելսեր։

Դա նշան էր մեծ վրտանգի,
Ճամբաբաժան կար այստեղ...
Նա կանգնած էր առանց ահի,
Փոքրիկ, զգաստ պիոներ։



Նույն վայրկյանին նա վճռական
Կարմիր փողկապը քանդեց,
Իբրև դրոշ ալեծածան
Դեպի վերև նա պարզեց։

Ինչպես հրմուտ սլաքավար,
Կանգնեց վրստահ նա ճամբին
Յեվ պարզեց իր փողկապը վառ,—
Ազդանշան վրտանգի...

Յեվ գնացքը կանգնեց հանկարծ,
Դողաց պողպատ իր մարմնով,
Կանգնեց մոտիկ ճամբից քանդված,
Ծուխ արձակեց փնչալով։

Բանվորները դուրս թափվեցին,
Ռելսը իրար միացրին,
Պիոներին շատ փնտռեցին՝
Փոքրիկ, զգաստ հերոսին։

Նա ռելսերով, զառիվայրով,
Շտապ առաջ եր անցել,
Ձյունի միջով արագ քայլով
Գյուղի ճամբան եր բռնել։

Մարդկանց համար մնաց անհայտ
Փոքրիկ տղան գանգրահեր...
Տանը մայրն եր սպասում հիվանդ,
Ճամբին նայում անհամբեր։



Իսկ գնացքը սուլեց ուրախ,
Նորից շարժվեց ու թռավ...
Պիոնների կողքով անվախ
Յերգ ասելով սլացավ։

Սառնամանիք ու ցուրտ ձմեռ...
Թիթեռների պես ողում
Ուրախ ճախրող ձյան փաթիլներ
Հանդարտ ներքև են թափվում...

Գատ. խմբագիր՝ Վ. Դրիգորյան
Նկարները և տեխ. խմբագրությունը՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0402382

Գլավլիտի լիազոր՝ Վ. 2050. Հրատ. 4891.
Գատվեր 398. Տիրաժ 4000.
Հանձնված է արտադրության 10 մայիսի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 15 մայիսի 1939 թ.

Գեահրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

12252

Р. ПОГОСЯН

О МАЛЕНЬКОМ ПИОНЕРЕ И ЕГО ГАЛСТУКЕ

Гиз Арм. ССР, Ереван, 1939